

ՄԻՈՒԹԻՒՆ

(ՕՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ)

Տարեկան արծաթ ֆրանք 4
Վեցամսեան 2
Հայաշատ քաղաքներու մէջ ձեռքէ կը
ծախուի հատը 10 ասնթիմ:
Փոսթի ծախքը խմբագրութեան կը
պատկանի:
Բաժնեգրիները կանխիկ վճարելի են:
Թերթ ուղղութեամբ բաժնեգրիներ չը
պարունակող նամակները նկատի չեն
առնուիր:
«Միութիւն»ը և ոչ մի տեղ ձբի չը
զրկուիր:

Գին 10 ՍԱՆԹԻՄ ԿԻՍԱՄՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ Գին 10 ՍԱՆԹԻՄ

Գ. ՏԱՐԻ

ԱԹԵՆՔ

1143

ԱՊՐԻԼ

1899

Թիի 29

Հրագրոյ մէջ բոլոր հրատարակուածներու պատասխանատուութիւնը կը պատկանի իւրաքանչիւր յօդուածի հեղինակին:

ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ

ՀՀԱԿԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՌՈՒՍՃՈՒՔԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ
Թիի 3

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Նազըմի կաւատ խնամին, այն տխրահաշակ լրտեսը, որ կը կոչուի Արփիար Արփիարեան, մինչև 95 թուականը՝ յանձն էր առած Նազըմի գաղտնի գործակալութեան պաշտօնը: Իր մատնութիւններու շարքին մէջ, անիկա, իր իսկ յայտարարութեամբ, յանձն առաւ լրտես սել Սորէն Նարպէյը, անոր Ռուսաստան ուղևորած ժամանակ: Այնուհետև, զանազան հնարիմաց միջոցներով, կարողացաւ սպրդել Պօլսոյ Հնչ. Մասնաճիւղին մէջ ու կլանել այն 20,000 ոսկին, որ նշանակուած էր Զէյթունի ապստամբութեան նըպաստելու:

Եւ տեսնելով որ՝ իր տղեղ դիմակը պատռւած՝ ալ անկարող է ծածկել թուրք փաշայի իր սեւաօրուս ու կեղծափառ դէմքը, զգալով որ՝ ալ անկարող է իր գաղբի գոյութիւնը քաջել Պօլսոյ մէջ, ուր իր դաւաճանական գործերը հրապարակուած էին, անցաւ Եւրոպա, միշտ հաւատարիմ մնալով սակայն իր մեղայագրի այն կէտին թէ, «Ո՛ր եր սիրտը, մեր կեանքը վեհափառ կայսեր նուիրուած մեան միշտ (*)»: Այն ամէն միջոց գործադրեց, որպէսզի Հայ ժողովուրդին մէջ մարէ ամէն յեղափոխական կայծ. ան յարձակեցաւ, ինչպէս Սուլթանի պալատին շուները՝ յեղափոխական գործունէութեան վրայ, ան ծաղրեց, ինչպէս Սուլթանի հարեմական կիները՝ յեղափոխական գործունէութիւնը, ձգտելով ցոյց տալ թէ՛ անպայման անիկա ողետաբեր եղաւ, որովհետև թուրք կառավարութիւնը զրգռեցինք մեզի գէմ. հետեւաբար, իր քարոզութիւնը կը յանգէր Սուլթանի հետ հաշտարար քաղաքականութեան մը հետեւելու, թուրք կառավարութիւնը չի վշտացնելու մէջ:

Կարճ ժամանակէն, իրեն միացաւ յայտնի մուրացկան, երգեցիկ սրճարաններու մանկլաւիկ, Արշակ

(*) Արեւել 1891, թիւ 2098

Զօպանեանը, Այս ողորմելի վիժուկը՝ դեռ վերջերս էր որ կուգէր դէպքերը խեղաթիւրելով, ցոյց տալ իր երկիւղած ու պնակալիզական որովհայեան հակութիւնը դէպի Նուպար փաշան, ու յայտնել որ՝ մեր վերջին գրեթէ քառորդ գարու մը պատմութիւնը սիւալ քայլերով առաջնորդուած դէպքերու շարք մըն է. հանգամանք մը, որու խղճամիտ քննադատութիւնը այս իմաստակ ու գաճաճ մասն չունէ կարողութիւնէն շատ վեր է:

Ու այս ամենուն հետեւեալն այն եղաւ որ, թուրք կառավարութիւնը յանձին Արփիարեանի ու իր արբանեակներուն, արտասահմանի մէջ ունեցաւ այնպիսի գործակալներ, որ համարձակեցան ցոյց տալ թէ՛ Հայերը առաջ եղբայրարար կապրէին թուրք ազգին հետ, գոհ՝ ամենայնիւ իրենց կեանքէն և թէ՛ յեղափոխականներն եղան պատճառ, եթէ տեղի ունեցան արիւնշալիք դէպքեր. այս փաստը, միշտ առաջ կը բերէ սակայն թուրք կառավարութիւնը իր ծանուցագրերուն մէջ: Եւ ահա այս բոլորի հետեւեալն եղաւ ողբալի շփոթութիւն մը միտքերու, հակադրեցութիւն մը՝ յեղափոխական ազգին վառ ու տենդոտ գործունէութեան:

Հիմա պատրուակեալ մուրացիկներու աննշան թափթփուքները, ինչպէս ամէն տեղ, նոյնպէս և Ռուսոստի մէջ, յայտարարութեամբ մը, յօդուած Զէյթունի սովիւններուն — խեղճ սովիւններ, որոնք արդեօք — կուզեն հանգանակութեան մը ձեռնարկել Ուէսթմինսթրի Դուքսին առնուել շահագործելով: Մարդ կ'զգայ կարծես պատրոյգը, որ առկայծեալ է... ԴԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԼՕՆՏՈՆԷՆ ԻԻՂ ԿՈՒՂԷ, ԻԻՂ:

Հայ ժողովուրդի պարտականութիւնը չէ՛ արդեօք, ոչ միայն արհամարհել այս ցեղին մէջ որդ որսացող ազրուկները, այլ անոոց գլուխը ճզմել, անոնց բոյնը քանդել, ինչպէս որ կը վայլէ վարուիլ Մերութեաններու և անոնց հետեւորդներու հետ: Զգուշութիւն:

(Կնիք)

ՀՀԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՌՈՒՍՃՈՒՔԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ
15 Մարտ 1899 ՌՈՒՍՃՈՒՔ

ԱԶԳ

Կը ծախուին վիմագրական երկու միքենաներ, որոնք թէև գործածուած, բայց ընտր և արագաշարժ, իւրաքանչիւրը կարժէ 250 ֆր: Դիմել խմբագրութեան հասցէին:

ՈՎ Ե ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՆ

(Շար. նախորդ թուէն և վերջ)

Պ. Յօդուածագրին գլխաւոր քննադատութեան պատախանն է յետոյ, անցնինք նուազ կարեւորութիւն ունեցող խօսքերուն:

Պ. Յօդուածագիրը կըսէ. «Առհասարակ ընթերցող հասարակութիւնն ալ այնքան խոտապահանջ չի թուիր իր կարողացածներուն համար և այս կերպով շատ անգամ կ'առաջնորդուի սխալ ճամբաներէ, և այլն»:

Այս դիտողութիւնները շատ ճշմարիտ գտնելով, արդէն սկսած էինք գրել և պարզել ճամբարութիւնները բոլորովին անկողմնակալ և ոչ-կուսակցական ոգիով, և պիտի շարունակենք միևնոյն ուղղութեամբ, Հայ հասարակութիւնը զգուշացնելու համար փայլուն խոստումներէ, անվստահելի անձերէ, լրտես-յեղափոխականներէ, կասկածելի կազմակերպութիւններէ, ճարպիկ ու ճկուն գրիչներէ, և մասնաւոր կողմնակալ քննադատներէ: Որքանոյն ժամանակ պէտք է խոստովանիլ նաև որ հասարակութիւնն ալ այնքան միամիտ չի թուիր ոսկեզօծ ալ թունալից դեղահատեր կու տալու: Հասարակութիւնը թէև մի քիչ ուշ, այլ վերջապէս կը թափանցէ ճամբարութեան և իր անողորմ վճիռը կ'արձակէ: Վա՛յ անոր որ հասարակութեան անողորմ վճիռին կենթարկուի, այդպիսին պատմութեան մէջ մեռած է. ժողովրդին դատապարտածը վերականգնում չունի:

Պ. Յօդուածագիրը կըսէ. «Մասնաւորելով խօսքերնիս պ. Թափառիկի յօդածին, պէտք է ըսնք որ Հնչակեան կուսակցութեան անցեալին ու ներկային մօտէն ծանօթ եղող ամէն Հայ (գժբաղդարար մենք ևս չաւ մօտէն ծանօթ ենք) կրնայ մէկ անգամէն տեսնել այդպիսի գրութեան մը անճշտութիւնները և անուղիղ տրամաբանութիւնն մը բղխած տարօրինակ եզրակացութիւնները»:

Մեր Միութեան մէջ գրածը լոկ ակնարկութիւն մ'էր, մենք ո'չ փաստեք, ո'չ ապացոյցներ, ո'չ դէպքեր և ո'չ ալ վկաներ մէջ բերած էինք, հետեւաբար կարելի չէ ըսել թէ անճշտութիւններ, անուղիղ տրամաբանութիւնն մը բղխած տարօրինակ եզրակացութիւններ կային. այս խօսքերը ըսելու համար, պէտք էր պ. Յօդուածագիրը լսէր մեր բոլոր փաստաբանութիւնները, և այդ ալ գրած

ու յղած էինք իր աւուրեալն որ թերևս նոյնիսկ իրենց դիմումին և խնդրանքին համաձայն խմբագրութիւնը չի հրատարակեց... Պ. Յօդուածագիրը եթէ համոզուած է իր պաշտպանած և պաշտած կուսքին անմեղութեանը, թող պահանջէ իր աւուրեալն և քէն մեր գրածը և պատասխանէ, ցոյց տալով անճշտութիւնները, անուղիղ տրամաբանութիւնն մը բղխած տարօրինակ եզրակացութիւնները, անշուշտ համոզիչ և ուղիղ ապացոյցներով:

Կը խնդրուի պ. Յօդուածագրէն որ հաճի խնդրին գործնական կողմնակալ ալ յիշել, քանի որ տեսակաւ և պատմական կողմնակալ մերը թուած էր:

Պ. Յօդուածագիրը կը շարունակէ. «Իրերու այս վիճակին մէջ Պօլսոյ վարչական մարմինը վիճաբանութեան առարկայ ըրաւ հանրային զգացում մը տալու պէտքը»:

Ինչպէ՞ս հանրային զգացումին գոհացում մը տալու համար ցոյց մը կազմակերպելու առողջ դատողութեան դէմ գործ մ'է. որ և է շարժում այն ատեն միայն հարկաւոր է, երբոր անոր յաջորդելիք իրական օգուտը բացայայտ է և կամ թէ շարժումը բոլոր պարագաները ի նկատի ունենալով եթէ օգտակար համարուած է, թէև հետեւեալը վնասակար լինի կամ անօգուտ:

Շատ անգամ ժողովրդին յուզումը, կորովը, եռանդն ու գրգռութիւնը կարող է սխալ քայլերու առաջնորդել գործիչը. ուրեմն յեղափոխական գործին ղեկավար եղողները պէտք է լինին խոհեմ, հեռատես, տրամաբանող, ոչ-գիւրապոյզ, չափաւոր եռանդով, պաղարիւն և անկեղծ: Եթէ ժողովրդական յուզումներուն հետեւիլ հարկ լինէր, այսօր Անգլիա թերևս մեծ դժբաղդութիւններու մատնուած պիտի լինէր, Սալոպի գիտցաւ չափաւորել և մեղմացնել ժողովրդի եռանդը և տեղի չի տուաւ արիւնշալիք և անորոշ ելք ունեցող պատերազմներու: Ժողովուրդներու բոլորումները վաղանցուկ հոսանքներ են, թէև շատ սաստիկ բացաւաւ են, այլ սակայն նաև շուտով կը մարին: Յեղափոխական ղեկավարներուն համար եռանդէ և աւելնէ աւելի մասնապիտուկութիւն և գիտակցութիւն հարկաւոր է: Խմբագրութեան գրասեղանին առջև տարիներով քամուած մնացած խմբագիրը չէ կարող գործնական յեղափոխութեան առաջնորդ դառնալ, նոյն իսկ շատ ալ անձնուէր լինի. հետեւեալը այն կըլլայ ինչ որ արդէն եղաւ:

Պ. Յօդուածագիրը կրտսէ. «ամէն կողմէ ձայն կը բարձրանար թէ յեղափոխականները պէտք է շարժին» (գիտէ՞ք ի՞նչ բանի համար) խնդրոյն կենդանութիւն (!) տալու համար։

Ուրեմն իրական, իսկական, համոզիչ և զգալի պէտքեր մը համար չէ որ պիտի շարժինք, այլ լոկ ինչ որ ոյն կ'ենք ան ու թիւն տալու համար։ Մեր խելագատակին մէջ չը սղմիր այս կարեւորութիւնը, թե՛րեւս միայն շարժած ցոյց տալու համար շարժիչ ուզողներու տրամաբանելու եղանակն է այս. անխոստովանելի ապիկարութիւն մը...

Պ. Յօդուածագիրը կը շարունակէ. «Յեղափոխական վարիչները Պիզմարքներ, Սալզպրիններ չէին»։ Եւ դարձեալ, «Վարիչներ, որոնք պէտք է խոստովանիլ, քաղաքագիտական լրբեմնի խաղերու հմտութենէ աւելի՝ եռանդ և անձնութիւններ (!) ունէին և իրենք ալ մատուցած էին հանրային հոսանքին (իրք փետուր մը հսկին դէմ...)»։

Իրաւ եթէ հայերը մանաւանդ գործիչները մէյ մէկ Պիզմարքներ ու Սալզպրիններ չէին կարող ըլլալ, սակայն անուրանալի է նաեւ որ գէթ կրնային օգտուիլ անոնցմէ, կրնային անոնց գաղափարները շօշափել, անոնց կարծիքներն իմանալ և ըստ այնմ գործին շարժում և մղում տալ։ Այո՛, փոխանակ հանրային հոսանքին մատուցելու, հանրային զգացումին հետեւելու, ժողովուրդին աւելնը, եռանդը, հայրենասիրական գինովութիւնը գոհացնելու, թո՛ղ ջանային ժամանակին ոգին, հանգամանքներն ու կացութիւնները իմաստասիրել, ցոյցին անհրաժեշտ լինել կա՛մ չի լինել իմանալ, ձեռնահաս անձերու դիմելով և անոնց խորհուրդներուն անսալով։ Քանի որ անձարակ էին, քանի որ ժողովուրդին յուզումներէն ազդուելու կանացի դիւրագոյնութիւնը ունէին, քանի որ դիւանագիտութիւնը կ'արհամարէին, պէտք էր որ գործէ քաշուէին, աւելի արժանաւորներուն և կարողներուն տեղի տալու համար։ Այդ խոստովանութենէ արդարացում չի լինիր, այլ պարզ դատապարտութիւն մը։

Պ. Յօդուածագիրը կը գրէ. «Ահա այս չափաւոր, մինչև մէկ աստիճան խաղաղասիրական շարժումին գլուխը կը պլկեն 200,000 հայերու արիւնը»։

Մտդ այս տեղերը կարգաւոր չէ կարող զսպել իր զայրոյթը և անոր հետեւող ջղային խնդար։ Արդեօք Պարոնը հայ հասարակութիւնը ապուշ կը կարծէ, մարդ խիղճը և ամօթի զգացումը մէկ կողմ թողելու է, որպէս զի համարձակի գրել Պապը Ալիի ցոյցին համար չափաւորը շարժում, մինչև մէկ աստիճան (աւելորդ յոգնութիւն է յանձն առել, այս աստիճանն ալ չի նշանակէր կ'ըլլար) խաղաղասիրական շարժում էր, կամ ի՞նչ բանի մէջ չափաւորութիւն կը գտնէ, այդ մէկ աստիճանը ո՞րն է, խաղաղասիրական շարժումն ունի՞ Այո՛, ունի՛, և այդ աստիճանն ալ գէնքն է, եթէ գէնք չի լինէր, Պարոնը համարձակ պիտի պօռար — մեր ցոյցը խաղաղասիրական էր, 200,000 հայերու արիւնը ուրիշի գլխուն պլկեցէ՛ք. — կարծեմ Պարոնը աւելի լաւ և ճիշդ արտայայտած կըլլար եթէ մինչև մէկ աստիճան

ձայնին տեղ այսպէս գրէր «գէնքով-խաղաղասիրական շարժում — և այն աստե՛ն ոչ որ առիթ կուենար խնդարու կամ զայրանալու, ինչպէս պ. Չօպանեան բարեկամը ըսած էր՝ «հայերը աղբսագիր մը տուին... գէնքով»։ Սրամիտ և իմաստալից չէ՞ք գտնէր այս բառախաղութիւնը...

Պ. Յօդուածագիրը կարգ մը հարցումներ ուղղած է մեզ, որոնց այստեղ աւելորդ կը համարինք պատասխանել, եթէ Պարոնը հետաքրքիր է իմանալ մեր պատասխանները կարող է դիմել զինքը պաշտպանող իր աւուսնի թերթին և կարգաւ մեր յօդուածը, մենք պատասխանելէ փախուստ չենք տար, այլ միեւնոյն խօսքերը կրկնել և գրելէ ձանձրացանք. մեղքը իր աւուսնի թերթին վրայը...

Պ. Ա. Չօպանեանի և մ'ր պ. Յօդուածագիրն մէջ, որ համախոհ, համամիտ և վաղեմի բարեկամներ կը կարծուին՝ գաղափարի և ըմբռնումի ահագին տարբերութիւն մը կայ, և այս տարբերութիւնը մեզ բաւական տարօրինակ կը թուի։ Պ. Չօպանեան՝ թէ և կողմնապաշտ կը գտնուի զանազան կէտերու մէջ, սակայն ազնուութիւնը ունի իրեններուն հակառակ կարծիքներ, պաշտպանելու։ Օրինակի համար, պ. Չօպանեան կը գրէ. «Ուրիշ մը չատ աւելի ճիշդալային բանաձև մը գտաւ օր մը, լրագրէր մը մէջ հարեանցի կերպով տեսած ըլլալով թէ անգլիացի չեմ գիտեր որ դիւանագէտը չեմ գիտեր որ միթիւնկին մէջ պէտք է Հայոց խնդիրը կարգադրել» ըսեր է. «Օ՛, կը կը գոչէր, քանի որ այդպէս է, պէտք չէ անշարժ մնանք, պէտք է ինկոյն քիչ մը փայտնենք և կրակին մէջ...»։ «Քիչ մը փայտնենք և կրակին մէջ» ըլլալով այդ արարածին բառարանին մէջ կը նշանակէր Հայաստանի մէկ անկիւնը դէպք մը բռնկեցնել և քանի մը հազար հայու ջարդ յառաջ բերել...

Ա՛րդ, սիրելի ընթերցող, այս խօսքերը մեր ընդդիմախօս Պարոնին ըսածներուն հետ բաղդատեցէք, քիչ մը փայտնենք և կրակին մէջ իսպառ ինչ որ ոյն կ'ենք ան ու թիւն տալու համար։ Մեր Յօդուածագիր՝ Պարոնը այդ խօսքերը մեղի դէմ փաստ ըրած և պաշտպանած է այդ սկզբունքը, իսկ ընդհակառակը, և աւելի իրաւամբ, պ. Չօպանեան պիտարակած ու ծաղրած է զայն։ Միայն իբր նմոյշ յիշեցինք այս երկու իրարու մօտ գրիչներու հակապոթիւնն այս մասը, եթէ երկու Յօդուածագիրներուն, այսինքն «Պապը Ալիի ցոյցին առիթ» յօդուածին և «պատասխանատուութիւնները» գրութեան հակառակութիւնները ցոյց տալ ուզէինք, այսքան երկար յօդուած մը ևս գրել պիտի պարտաւորէինք։

Վերջին խօսք։ Մենք անկողմնակալ ոգիով, միայն ճշմարտութիւնը և ապագայ շարքները նկատի ունենալով գրեցինք այս յօդուածը և գրած ենք նմանները. խնդիրը միայն Արփիարի անձին կամ անհատականութեանը վրայ չէ, եթէ նա չի մասնակցէր յեղափոխական գործին և մա-

նաւանդ զեկաւարտող դեր չ'ստանձնէր նորակալմ վարչութեան մէջ, մենք բնաւ իրաւունք չ'էինք ունենար իր անձով ու գործերովը զբաղելու։ Քանի որ այսօր կուսակցութեան մէջ գործօն դեր մը ունի և կրնայ առաջուայ նման շարքներ պատճառել ազգին, մենք իրաւունք կուենանք իր և իրեն նմաններուն անցեալ և ներկայ արարքները քննադատել, և հայ հասարակութիւնը զգուշացնել անոնցմէ։

Եթէ Արփիարի անմեղութեանը համոզուողներ կան, կարող են բոլոր տարածայնութիւնները ցրուել խնդիրը միանգամ ընկերային գատաւատանին մէջ քննելով ու ղառելով։

Ուրեմն, կառավարկեմ ամեն կուսակցութիւններէ երկերկու հոգի պատգամաւորներ ընտրել, այնպիսի անձեր որ հասարակութեան կողմէ ճանչցուած լինին իբր շատ անկեղծ և ոչ-թուեղ կուսակցականներ կամ կողմնակալներ, նոյնքան ալ ընտրել ոչ-կուսակցական անհատներ, ու՛ չիմ, ուսեալ, անկեղծ և ոչ կողմնապաշտ։ Ասոնք պէտք է մի ազատ երկիրի մէջ ժողով գումարին և հրաւիրեն բոլոր անոնք որ Արփիարի գործերը կը քննադատեն և զայն դաւաճան մը կը նկատեն։

Որպէս զի երթեկութեանց և բնակութեանց ծախսերը հոգացուն, Արփիարի պաշտպանները պարտաւոր են այդ առթիւ հանգանակութիւն մը բանալ։

Միայն ընկերային գատաւատան կուսակցներ, ըսելը չի բաւեր, ժողովուրդին աչքին թօզ փշելէ պէտք է սկսին գործնական կերպով կարգել այդ դատաստանը, և այդ պարտքն ալ ամբաստանալ կողմին կը պատկանի։ Մինչև որ այդ դատաստանը չի կազմուի և Արփիարի գործը չի քննուի, մենք և շատեր իրաւունք պիտի ունենանք մեր համոզումը չի փոխելու և զայն նկատելու իբր դաւաճան մը ազգին և իր սկզբունքներուն։

Անկցի՛ դաւաճանը, կեցցէ՛ անձնուէրը...

Թափառիկ

ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Շար. 28րդ թուէն և վերջ)

Այդ միջոցներուն Մամբրէի ապագայ տեւօրներէն մէկուն մատնութեամբ ևս բանտ ձգուած էի, բանտարկութենէս ձիւղ մէկ ամիս վերջ մեր ընկերներէ մէկուն մատնութեամբ, Վահէն ևս բանտ ձգուեցաւ, մեր բանտարկութեան միջոցին խումբը յաջող կերպով կը գործէր, որուն լուրը մեզ հասնելով մեր բանտային տխուր կեանքը փոքր ինչ կամոքուէր, ոչ ապագէն մեր փափաքանց մասամբ հասած էինք։ Չուշացան միջադէպեր սակայն որոնք մեր ձեռնարկութեան խոչնդոտներ եղան։ Տաճատը դէպքով մը ստիպուած էր միաժամանակ հեռանալ ծննդավայրէն ինչպէս նաեւ քիչ ժամանակ վերջ Սմբատը՝ իրենց հրաձեռութիւնը մեզ զրկեցին հետզհետէ։

Կարեւոր գործիչներու հեռացումը մեծ վնաս տուաւ գործին, թէ և Ց-Ց ամիսներ վերջ ևս բանտէն ազատուեցայ սակայն տեղւոյն կառավարութիւնը ինձ բոլորովին արգիլեց մնալ այն կողմերը, ստիպեալ ևս ալ Պոլիս մեկնեցայ, ուրկէ Տաճատը անցած էր

Եգիպտոս. Սմբատը գտայ Պոլիս, այսանգամ Պոլսոյ իրենց հայրենակիցներէն ստուար խումբ մը կազմած էր, սակայն փաստ որ Հնչակեան Պոլսոյ մասնաճիւղը փոխանակ իր կոչման բարձրութեան վրայ մնալու չեղած էր իր ճամբէն, որով Սմբատի խումբն ևս վարակուած էր. Սմբատ իմ ժամանումովս խմբին վիճակին դարմանում մը կը յուսար, դժբաղդաբար (չնորհիւ Հնչակեան Պոլսոյ վարչութեան) մեզ չի յաջողուեց խումբը իր գահավիժումէն փրկել. փոխանակ յեղափոխական Ս. ուղիէն ընթանալու, ումանք սկըսած էին ստոր գողութիւններու ետեւէ ըլլալ և յափշտակածնին գրպանել։

Այդ ժամանակ նշանաւոր դաւաճանի մը մահուան վճիռ տրուած էր. պէտք էր անպատճառ իաւարեցնել, որոշուեցան երկու տղայք սակայն վճուական վայրկեանին խոյս տուին իրենց պարտականութիւնը կատարելէ, ըսպէն թանկապին էր, այդ տեղ բոլորովին զայրացած այդ սրիկայական դատաւրութենէն, Սմբատ ուրիշ աղու մը հետ գէնքը առնելով գնաց որոշեալ տեղը և դաւաճանի անցած պահուն գնդակը միտուեցաւ նորա պիղծ կողերուն մէջ և ինքը ճարպիկութեամբ մը փախուստ տուաւ սակայն ցածոգի հայրենակցի մը մատնութեամբ բռնուեցաւ ու մահուան դատապարտուեցաւ։ Տաճատն ևս Եգիպտոսի մէջ, Սասնոյնոյ կոտորածին մասնակցող ու վերջը լրտեսութեան պաշտօնով Եգիպտոս գտնուող թուրք գումիսէր մը (որն որ պարձանօք կը պատմէր նոյն միջոցին Եգիպտոս փախած Սասունցի Մուշեղի տունը տեղը բարոքանք ընելը և նորա մանկամարդ ամուսնի վայրագորէն լիկելը...) խեղճած ըլլալու ամբաստանութեամբ միեւնոյն Մուշեղի հետ բանտարկուած էին, նոցա դատաւարութիւնը շատ արտաշարժ եղած էր, այդ երկու վեհ էակները կը տքնէին մէկզմէկ աղաթելու համար իւրաքանչիւրը յանցանքը իր վրայ առնել, հուսկ ապա Մուշեղի մահ՝ իսկ Տաճատի ցկեանս տաճանակիր աշխատութեան վճիռ տրուեցաւ, այն երկիրին մէջ ուրտեղ կը կառավարուի Պէրլինի վեհաժողովին մէջ Հայոց բանտարկութեան միեւնոյն երաշխաւորող՝ Սասնոյ կոտորածին հանդիսատես գնացող և Հայկական քստմնիլի արհաւիրքներու ժամանակ սուտ խուձեւացող, քաղաքակրթիալ «Քրիստոնեայ» տէրութիւններէն մէկուն հովանաւորութեան տակ։ Հարիւրներով հայ կոտորող, կոյսերու պատիւը բռնաբարող, լիտի գումիսէրի մը արդար պատիւը գործադրող՝ երկու երիտասարդներէն Մուշեղ կախաղան բարձրացաւ Գահիրէի մէջ, իսկ Հէգ Տաճատը Արփիկէի խորերը տաճանակիր աշխատութեամբ իր սեօրերը կանցունէ։ Պաշտելի ընկերներ Ձեզ երբէք չ. կարող մոռանալ այն չքանակը որուն մէջ մեծ դեր կատարեցիք և Ձեր արդար վրէժը անլուծելի չպիտի մնայ, դուք այն յեղափոխականներէն չէիք որոնք փառաւորուելու սին տենջով ժողովուրդը սուրի ու հուրի կը վարեն ու իրենք խոյս կուտան արտասահման՝ ազգին հաշուին ապրելու. ո՛ւր և ի՞նչ վիճակի մէջ ալ գտնուիք մի վահատիք վասնդի ապագայ պատմութիւնը ոսկի էջեր պահած է Ձեզ և Ձեզ նմաններու համար. զեղանի խաւարին մէջ

ճանաչափայլ գոհարներ էք դուք ո՛ր հայրենիքի արժանաւոր զաւակներ, գուցէ քիչ ժամանակէն փոխախառն մեծ-ոճրագործը և իր աւագակային արիւնքաւոր լաւագործները շանթալիք քայքայուով լուծուին և դարձեալ բաղդ ունենանք տեսնել և փառիւ այն վայրերուն որոնց բանաստեղծը իրաւամբ «Դրախտ» անունը տուած է և որոնց անհուն տառապանքներուն ի տես Ձեր վեհ սրտերը շարժեցաւ և կամաւ գոհ դրիք անձերնիդ Հայրենիքի փրկութեան Ս. Սեղանին վրայ, Թէ՛ և Հայրենիքի մէջ չկան այլ ևս Շմառններ ժիրայրներ այդ անմահ դէմքերէն, մին գնաց մարդկային իրաւանց պաշտպան նահատակաց լէզէօնին միանալ, իսկ միւսը սառնապատ Սիպերի խորերը տանջուիլ, սակայն ահաւրի ոճրագործին ի գործ դրած վայրագութիւնները այսօր ազատութեան ծառայէն տոշորող դարձուցած են մեր պաշտելի հայրենեաց քարերն ու մարմնադներն իսկ, Հայ նորածին մանկիկէն սկսեալ մինչև զառամեալ ծերուկը յետ այսու ձեր բացած ուղիէն կընթանայ մինչև կը հասնի ազատութեան աւետարէր արշալոյսը:

Աւիտի Որդեգիրը

ԲԱՐԻՁԻ ՄԵՐ ԹՂԹԱԿՑԷՆ

Ազգային իմաստակը՝ Չօպանեան իր հրատարակած թերթին՝ Երրորդ թուոյն մէջ «պատասխանատուութիւնները խորագրով յօդուած մը գրած էր, և քննադատած ներսէս Սրբազանի և իր խորհրդակիցներուն գործը:

ԼՐՏԵԱՆ — ՅԵՂԱՓՈԻԱԿԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԻՆՏ ՏԵՍԱՐԱՆՈՎ

Դիտեց և Գրեց

ՃԵՄԱՐՏԱՆՈՍԵԱՆ

(Շաբ. 28րդ թուէն)

Հիւսնի պէյ — Եւ համագիտ կրող բոլորներուն, ժամտարմեններուն կը պատուիրենք որ ճամբան պատահած հայերնուն ձեռքակալեն, և երբ իսլամ ժողովուրդը անոնց վրայ յարձակի չի պաշտպանեն:

Նազըմ փաշա — Իրաւունք ունիք, բաւական հայր ալ այդ կերպով կը սատկին:

Հիւսնի պէյ — Դեռ մտքէս ուրիշ բաներ ալ կ'անցնին:

Նազըմ փաշա — Ձեր հնարամտութիւնէն շատ բան կ'սպասեմ. անշուշտ Սուլթանը մեզմէ շատ գոհ պիտի մնայ:

Հիւսնի պէյ — Անկասկած. մեր նախկին վէճիկներուն մտածած ու չի կրցած գործադրած մէկ կարեւոր ծրագիրը, այսինքն հայերը բնաջինջ ընելով հայկական խնդիրը ջնջելը մենք մէկ օրուան մէջ պիտի գործադրենք:

Նազըմ փաշա — Ուրիշ, եթէ ուրիշ կարեւոր խորհուրդներ ունիք, ինձ յայտնեցէք, որպէս զի Սուլթանին հաղորդելով հաւանութիւնը ըստանամ:

Հիւսնի պէյ — Բանտապահներուն պատուէր տալու է որ այն օր բանտը մտած հայը ողջ չի թողուն:

Նազըմ փաշա — Հիւսնի պէյ:

Հիւսնի պէյ — Փողոցները ողջ թէ մեռած բոլոր վիրաւոր հայերը կառքերով փոխադրելու է, զիտէք ո՞ր...:

Նազըմ փաշա — Կամ Պատրի-

Ազգային իմաստակին այդ յօդուածին ի պատասխան երկու օրէ ի վեր հրապարակ ելաւ Բարիքի մէջ 30 էջէ բաղկացեալ տետրակ մը «Ի խաչ հան զդա» խորագրով. հեղինակներն են Գ. Ե ա ն և Մ. Գ ա լ փ ա թ ճ Ե ա ն:

Կը դարմանամ այդ երկու պարոններուն որոնք ժամանակին և ստակին կը վատենն պատասխանելու համար Չօպանեանի մը գրածներուն. կ'արժէ՞ արդեօք կարեւորութիւն տալ այդ արարածին:

Չօպանեան խեղճ... մ'է որ իրեն հայ տուողին ետեւէն կերթայ զլիւիկոր. ասիկա գիտցուած ճշմարտութիւն մ'է, և կրկին ապացուցուելու պէտք չունի:

Ըստ իս Գ. Ե ա ն և Մ. Գ ա լ փ ա թ ճ Ե ա ն աւելի աղէկ կընէին եթէ իրենց հրատարակած տետրակին տրպագրութեան համար եղած ծախքը յատկացնէին յեղափոխական գործին, և կամ զրկէին Հայ որբերուն ի նըպաստ կազմակերպուած մարմիններէն մէկուն:

Յեղափոխութիւնը ազգի մը կրած տառապանքներէն և չարչարանքներէն յառաջ եկած բարկութեան արտայայտութիւնն է. երբոր այդ բարկութիւնը կը պոռթկայ, ոչինչ և ոչ ոք կրնայ անոր դէմ գալ:

Թո՛ղ Չօպանեան և իրեն համախոհները գրեն ու խօսին որչափ կուզեն յեղափոխութեան հակառակ. Հայ ազգը իր տառապանքներէն և չարչարանքներէն ազատուելու պէտք ունի, և այդ ազատութիւնը պիտի ձեռք բերէ յեղափոխութիւնով միայն: Ամէն յեղափոխական պատմու-

թիւն ունեցած է իր սրիկաները որոնք շահագործած են պարագաները և օգտուած են: Հայ յեղափոխութիւնը չէր կրնար խուսափել ատկէց, և ազգային իմաստակէն աւելի ո՞վ կրնար ըլլալ ազգային յեղափոխութեան սիրկան. բարեբաղդաբար յեղափոխութեան մէջ տխուր դէմքերը չեն ներգործեր ազնիւ և մեծ դէմքերուն վրայ. ազգային գործիչները իրենց նպատակը ունին, ուշ կամ կանուխ պիտի հասնին իրենց նպատակին:

Աշխարհքիս և մանաւանդ վերջացող դարուն օրէնքն է ազգերու անկախութիւն և ազատութիւն:

* *

Յառաջիկայ յօդուածովս մտադիր եմ Միութիւնի պատուաբաժան ընթերցողներուն ներկայացնել ազգային յեղափոխութեան սրիկաներուն գործերը:

Ս. Ստեփանեան
Բարիք 30 Մարտ 1899

ՀԱՅ ԲԱՐԵՐԱՐ ՄԸ

Երեւելի Հայ բարերար մը խմբագրութեան նամակով մը կիսացնէ թէ՛ եթէ հրապարակը մաքրուի և յեղափոխական անկեղծ՝ անշահախնդիր մարմինները միանան, պատրաստ ունի 20 հազար անգլ. ոսկի սուրբ գործին յատկացնելու համար:

Կը յաւելու նաև թէ՛ եթէ իւր անկեղծ բաղձանքները պատկուած տեսնէ, 6-8 ամսուան կարճ ժամանակամիջոցի մէջ կարող է իւր գաղափարակից բարեկամներէն ալ ստա-

նալ մեծամեծ գումարներ և յիշեալ գումարի քանակութիւնը հասցնել 100,000 անգլ. ոսկիի:

Մեծանուն հայրենասէրը առայժմ անունը միզ վերապահել յանձնարարած է. առ այս մի տեսութիւն կենեք մեր յառաջիկայ համարով:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ Զ. քաղաքացի Ստեփան Մարգարանեան՝ որ կոտորածի ժամանակ Կ. Պօլսէն Եգիպտոս փոխադրուած է: Հասցէն գիտցողը թող հաճի խմբագրութեանս իմացնել:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

— Բաղէշի իւրաք գաւառակի կըծվակ գիւղացի պ. Լեոն Փափազեան՝ որ երկար տարիներ Բէրա խոհարարութեամբ շահած իւր համեստ գումարով միշտ յեղափոխականներու օգնած և անոնց գործունէութեանց նեցուկ մը եղած էր, կոտորածէն յետոյ Յունաստան ապաստանելով իւր սովորական ազգասիրութեամբ աջակցութիւններ կընէր, խեղճը կոկորդի հիւանդութեան մը զոհ գնաց Մարտ 8ին:

— Կ. Պօլսէն կը գրեն թէ՛ հրապարակին վրայ առեւտրական անձկութիւնը զգալի է. գործ չկայ քէս ա տ է ըսելը խստիւ արգիւրուած է. այդ բառը արտասանողը 26 զրէ, 10 փարա տուգանքի և երկու օրուան բանտարկութեան կը դատապարտուի:

— Մեր ազնիւ բարեկամներէն Տիար Գ. Պրոխորովիան նամակով մը կիսացունէ մեզ թէ՛ Սերպիոյ զանազան քաղաքներու հայ գաղութը հայրենա-

տուիլէ որ միշտ պատրաստ գտնուին, ոչ մէկը արձակուելու չի տրուի:

Քօմիսէր — Դիւստ վրայ: (Նազըմ փաշա Պալատին վերադառնալով ուրախ զուարթ ներս կը մտնէ):

Հիւսնի պէյ — (Քօմիսէրին) Դընացէք հրամաններս կատարել:

(Քօմիսէրը կը մեկնի: Նազըմ փաշա Հիւսնի պէյին ուսին վրայ ձեռքը դնելով կըսէ):

Նազըմ փաշա — Սուլթանը ևս մեր ծրագիրը ընդարձակեց, իսկապէս հանձար է ծներ. թերևս մեր ընելիքը Սուլթանին խորհածին բովնչանակութիւն մը չունենար:

Հիւսնի պէյ — Ըսել է նորին վեհափառութիւնը մեր ծրագիրը ընդունեց:

Նազըմ փաշա — Ո՛չ միայն ընդունեց, այլ և ընդարձակեց:

Հիւսնի պէյ — Ի՞նչպէս, անհամբեր եմ իմանալ:

Նազըմ փաշա — Մեր ծրագրով միայն պիտի մէջ մի քանի հազար հայեր պիտի ջարդուէին, այնպէս չէ՞...:

Հիւսնի պէյ — Այո՛:

Նազըմ փաշա — Սակայն անդին գաւառները միլիոնաւոր հայեր պիտի մնային, հայկական խնդիրը ըստաճը միշտ վառ պահելու ընդունակ հայեր:

Հիւսնի պէյ — Այո՛, բայց ինչ կրնայինք ընել. այն տեղերն ալ մէջ մէկ Արփիարներ ունենայինք գործը զիւրին էր:

Նազըմ փաշա — Ահա՛ ճիշդ այդ խնդիրն էր որ մեր տաղանդաւոր Սուլթանը լուծեց. այժմէն ամէն կողմ իրատէ ըրաւ որ հայերը ջարդուելու համար իսլամ ժողովուրդը գաղտնաբար պատրաստեն:

Հիւսնի պէյ — Ի՞նչ կըսէք. հիացումէս խելքս պիտի թացնեմ:

Նազըմ փաշա — Այո՛, հիմա հեռագիրները իրատէն ամէն կողմ հաղորդած են, որ Պօլսոյ ցոյցը իրենց հեռագրուածին պէս, յարմար առթիւ մը կոտորածը ու թալանը սկսին, և

մանաւանդ կոտորածէն ու թալանէն զերծ մնացող հայերն ալ բանտարկեն իւր կոտորածի պատճառ և անմիջապէս դատապարտեն, որով Եւրոպացիներուն աչքին թօզ փչենք:

Հիւսնի պէյ — Այո՛, անիրաւ և աւանակ Եւրոպացիներուն քթէն շատ լաւ բռնեց Սուլթանը. անպիտաններ... ամէն ներքին խնդիրներուն մէջ իրենց քիթը կը խօթեն, տեսնեք ձեռքերին ինչ պիտի նստեն, մանաւանդ սա քած Անգլիացիներ:

Նազըմ փաշա — Հիւսնի պէյին պիտի հաշնէ, քանի որ Ռուսիա և Անգլիա համաձայն չեն, մենք մեր տիւտիւրկը կը չալենք:

Հիւսնի պէյ — Մանաւանդ Գերմանիոյ պէս զօրաւոր բարեկամ մը ունինք մեր կռնակը: Գաւառներու կոտորածը ի՞նչ սխառմով պիտի կատարուի:

Նազըմ փաշա — Սուլթանը ձեր հնարքներուն շատ հաւանեցաւ, միևնոյն միջոցները հոն ևս ի գործ պիտի դրուին, սխառմաթիւք չարդ մը:

Հիւսնի պէյ — Արփիար մեր ծրագրին գործադրութիւնը պիտի ապահովէ, եթէ չի յաջողի, մեր ծրագիրը անգործադրելի կը մնայ:

Նազըմ փաշա — Անշուշտ, ամենէն մեծ գերը ան պիտի կատարէ, մեր խորհածները երկրորդական բաներ են, եթէ զէնքի խնդիրը չի լուծուի, մեր ծրագիրը օդը կը ցնթի:

Հիւսնի պէյ — Անոր ճարպիկութեան և հլու հաւատարմութեան վստահ եմ, տակաւին շատ աւելի մեծ ծառայութիւններ պիտի կրնայ մատուցանել: Ես պէտք եղածները կարգադրեցի, մէկ երկու օրէն ամէն ինչ կազմ և պատրաստ կը գտնէք:

Նազըմ փաշա — Գոհ եմ, յաջողութիւն (ոտքի կ'ընէ):

Հիւսնի պէյ — Աստուծոյ օգնութեամբ (ոտքի ելնելով կը մեկնի): (Վարագոյրը կ'ընէ)

(Շարունակելի)

սիրական ջանքերով յաջողած է 260 ֆրանքի գումար մը հանգանակել ի նպաստ վանայ սովելոց, զոր Մարտ 17/29 թուակիր փոսթ-մանտադով զրկած է Պատրիարքարան: Փափաքելի էր որ ամէն տեղ գտնուող մեր հայ եղբայրները Սերպիոյ սակաւաթիւ ազգայնոց բարի օրինակին հետեւէին:

— Ֆիլիպէի «Φιλιπούπολις» անուն յունական թերթը ի նպաստ Հայաստանի պաշտպանողական յօդուած մը հրատարակելով, խոստի կը քննադատէ մեծ պետութեանց քաղաքական անտարբեր ընթացքը հանդէպ Հայաստանի սովատանջ խեղճ արարածներու, որուն պատասխանատուութիւնը Ռուս կառավարութեան կը վերադրէ:

— Կ. Պօլէն Մարտ 25 թուականաւ կը հեռագրեն թէ՛ Ալի Մահմուտ անուն զինուորական սպայ մը՝ Սուլթանի կեանքին դէմ սպանութեան փորձ ընելու հետամտող ժէօն թուրքերու մեղաւկից նկատուելով ձերբակալուած է: Ամբաստանալին տունը խուզարկուելով փնտաւար թղթեր գտնուած են, որուն համար մահուան դատաւարտուելով, միևնոյն օրը վճիռը գործադրուած է Վոսփորի բարձանց վրայ:

— Գերման Կայսրը յառաջիկայ աշնան եղանակին պիտի այցելէ Եգիպտոս:

— Հնդկաստանի մէջ ոսկիի հանք փնտռող երկու գաղղիացիներ պ. պ. Տանսօն և Քիթիս տեղացի հնդիկներէն սպաննուած են:

— Հռովմէն կը հեռագրեն թէ՛ թուրք Դեսպանը մեծ պետութեանց ներկայացուցիչներուն դիմելով խնդրեր է որ Հերակլիոնի Օգոստոս ամսի կոտորածին մասնակցող բանտարկեալ թուրքերու ներում շնորհուի Բրէնս Եօրկիի կողմէ:

— Սուլթանը նոր իրատեղով մը կը հրամայէ Մակեդոնիոյ իշխանութեանց որ կարգապահութեան լրջօրէն հսկեն քրիստոնէից հետ լաւ վարուին և խռովարար թուրքերը խստիւ պատժուին:

— Ձէնընկէցութեան խնդրոյ առթիւ գումարելի միջազգային ժողովին ցարդ հրաւիրուած են 24 պետութիւններ, որոնց 19ը եւրոպական, իսկ մնացեալ հինգ կառավարութիւններն են, Ամերիկայ, Պարսկաստան, Սիամ, Չինաստան և Ճապոն: Սուլթանի կառավարութիւնը ներկայացնող պատուիրակներն են՝ Թուրխան, Մէհմետ, Ապտուլլահ փաշաները և արտաքին գործերու նախարարութեան առաջին քարտուղար Նուրի պէյ:

— Պուրթըղէն կը հեռագրեն թէ՛ աղմկալից խռովութիւններ պատահած են պահպանողական կուսակցութեան կողմէ կազմակերպուած քաղաքական միջինի մը վերջացած պահուն: Ոստիկանութիւնը և քաղաքական զօրքերը զինու զօրութեամբ միջամտելով զժողովրդին կարգապահութիւնը:

— Ամերիկացի գիտնական երկրաբան մը կըսէ թէ՛ աշխարհս բիշ ժամանակէն պիտի կործանի նոր ջրհեղեղով մը:

— Բ. Դուռը նոր չրջաբերական մը հրատարակելով, կոչում կընէ իսլամ

հասարակութեան, որ ժէօն թուրքերու ցնորամիտ երեւակայական սահմանադրութիւն մը հաստատելու ձգտումներուն կարեւորութիւն չընծայեն: Այդպիսի ապուշական ծրագրի մը գործադրութիւնը անկարելի հռչակելով յորդոր կը կարգայ հաւատացեալներուն որ իրենց վեհափառ տիրոջ հաւատարմման և անսահման վստահութիւն ունենան անոր հայրական հոգածութեան ու հայրենասիրութեան վրայ:

— Մօտերս Համիտի երկու թիկնապահները անյայտ եղած են, Սուլթանը կասկածելով որ ժընէվ գացած ու ժէօն թուրքերու հետ միացած են, իւր հաւատարմներէն Տատեան Յարութիւն փաշան հրաւիրելով յանձնարարեր է ժընէվ երթալ և անոնց հետքը գտնել ու համոզելով ժայրաբաղաբը վերադարձնել:

— Գրգը-Աղաճի թուրք և պուլկարներու ընդհարումը Սօֆիայի և Եւրոպական թերթերը հրատարակեցին. հակառակ թղթակիցներու մանրամասն նկարագրութեան թուրք և պուլկար կառավարութիւնները պաշտօնագէտ կը հերքեն:

— Թուրք կառավարութիւնը Սերպիոյ Պուլկարիոյ սահմանները և ամբողջ Մակեդոնիան սպառազինեցին յետոյ Յոյն և Թրքական սահմանադրութիւն ալ կամրացնէ. անցեալ շաբթու 12 վախօն հրացան և այլ ռազմամթերք զրկեց սահմանադրութիւն թուրքիոյ ռազմագիտական այս պատրաստութիւնները խոր տպաւորութիւն կը թողուն Յունաստանի և Պալքանեան կառավարութեանց քաղաքագիտական ակումբներուն մէջ:

— Լարիսաէն կը հեռագրեն թէ՛ Բէճէպ Սուլէյման պէյ անուն զարուստ թուրք մը առեւանգուած է 8 աւազակներէ բաղկացեալ հրոսակախումբէ մը որ՝ հազարաւոր ոսկիներ փերկանք կը պահանջէ:

— Ռումանիոյ և Յունաստանի նամակատանց միջև համաձայնութիւն գոյացած է, որով 1899 Յունաստանի սկիզբէն փոսթ Մանտադով դրամ զրկելու գրութիւնը ընդունուած է երկուստեք:

«SOURÉN AFTANDELIAN TAVRIS-PERSE»
Vend Timbres-Poste Persans, en gros et en détail.
Demander prix-courant contre 15 cent sans oblitérés.

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱՆՇԱՆ
Գունաւոր և մեծադիր. գինն է 2 ֆր. փոստի ծախքով: Դիմել խմբագրութեան կամ արտասահմանի մեր պ. պ. գործակատարներուն: Զինանշան ունենալ փափաքողները և «Միութիւն»ը հատը 10 սանթիմի ձեռքէ առնել ուղղորդելով թող դիմեն՝ Ռումանիաէն և Սերպիաէն հետեւեալ հասցէին՝ Manouk Krikorian, Kazarma Pompierilor. (Constanta Roumanie)
Ռուսչուք՝ Karnig Deukmedjian Roustchouk (Bulgarie)
Վառնա՝ M. Zarbhanlian Varna (Bulgarie)
Իսկ Ամերիկացի ազգայինք դիմեն՝ Mr. Dades Zakar a Serew et Co. Providence. U. S. A.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ
Պ. Ա. ԶԱՐԳԱՆԷԼԵԱՆԻ
(Հաստատուալ ի Վառնա Պուլկարիա)

Կը դառնուին ամէն տեսակ գարոցական և վիպական գիրքեր, «Միութիւն» խմբագրութեան հրատարակած Հայկական Զինանշան որուն գինն է 2 ֆր. փոստի ծախքով: Նմանապէս Հայկական ընդարձակ երգարան գին 2 ֆր. փոստի ծախքով: Դրամի փոխարէն կընդունուին չի գործածուած նամակադրոշմներ (փուլ) Պուլկարական, Գաղղիական, Անգղիական և Թրքական: Միտու կառնուին և թէ կը վաճառուին ամէն տեսակ նամակադրոշմներ: Դիմել առ Mr. A. Zarbhanlian, Librairie Varna (Bulgarie)

ԲԱԶՄԱՎԵՊ
ԲԱԶՄԱՎԵՊՈՆ՝ կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը: Կը պարունակէ ուսումնական հին նորակազմ բառերու ստուգաբանութիւն, հետաքրքրական ազգային տեղեկութիւնք. նրմանապէս պատմական, ուսումնական, կենսագրական, բարոյական և իմաստասիրական հայն յօդուածներ:
Հասցէն՝
RÉDACTION DE LA REVUE „HAZMAVEP“,
St Lazar VENISE (Italie)

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ»
ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ
Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:
Հայ - Գրական յօդուածներէն զատ՝ ճշդիւ տեղեկութիւն կը տրուի Լա - գրականութեան, աստուծութեան հայն նկատմամբ ամէն ամիս ելած հրատարակութեանց վրայ: Նոյնպէս քննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ տպուած կարեւոր լրերու մէջ: Հասցէն՝
A la Rédaction de la Revue „Hantesse“, Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

Ս. ՍԱՊԱՀ ԴԻԻԼԵԱՆ
ԵՒՐՈՊԱՅԻ ԳԱՆԱԲԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ
ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ
96 Երեսէ բաղկացեալ կարգաւորածանի ընտիր գործ մ'է գինն է 1 ֆր. — Շուտով ի լոյս պիտի ընծայէ նաև ԱՐԵՆԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ «ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ» գրքոյը դիմել հեղինակի հասցէին ի Ռուսչուք, և «Շարժում» խմբագրութեան ի Վառնա:

ԲԱՆԱՍԵՐ
ՀԱՆԴԵՍ ՀՆԱՌՈՍԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ և ԲՆԵԱԿԱՆ,
որ պիտի հրատարակուի ի Պարիս յառաջիկայ Մարտ ամսոյ վերջը.
ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՄԲ Կ. Յ. ԲԱՄՍԱՋԵԱՆԻ
Եւ աշխատակցութեամբ ազգային և օտար արեւելագիտաց:
Բացուած է բաժանորդագրութիւնը՝ Տարեկան չորս դրքի համար 20 ֆր. ամէն տեղ. իսկ իւրաքանչիւր գիրքն առ նուազը 100 էջէ բաղկացեալ՝
Կ'արժէ ֆրանք 6:
Դիմել իւր հետեւեալ հասցէին՝
Basmadjian — 112, Bd Rochechoart. PARIS

ՀԱՅԵԼԻ
Ազգային և Զաւեշտական
Շարախահանգէս
Տարեկան բաժնեգինն է 12 ֆր. վեցամեայ 6 ֆր. կանխիկ. Հասցէն՝
Diran Papazian Rue Dragoman,
K. Stepan Varna (Bulgarie)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԴԻՐԲ ԳԱԶ.
ԵՒ ՀԱՅ
ԴՈՐՄՆԱԿԱՆ ԴԻՏՈՒԹԵԱՆՑ
Ի. Հ. ՍԻՄԵՆԷ ԵՐԵՄԵԱՆ

Աշխարհիկ լեզուով՝ ընդարձակ բացատրութիւններ կուտայ ընդհանուր գիտական և բժշկական իրաց և այլ կարեւոր նիւթոց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք անպակաս են: Սոյն գործոյն բաժանորդագրութիւնը, որ է 10 ֆրանք, կը տեւ մինչև մարտ ամսոյն սկիզբն. յետոյ գինը 15 ֆրանքի կը բարձրանայ: Մինչև ցարդ բաժանորդագրութիւնը հասած են 150ի. Հասցէն՝
Direction de l'Imprimerie arménienn
St LAZAR VENISE

Պ. Գ. Տէօքմէճեան հրատարակած է հետեւեալ մեծադիր (21—27) լուսանկար պատկերներն որոնք ընտիր քարոզի (33—39) վրայ փակցուած կը ծախուին հատը ֆր. 2,50ի՝ ամեն տեղի համար և փոստի ծախքով միասին:

Ազգային հաստատութիւններու և մեծաքանակ գնողներու համար զոհացուցիչ զեղջ:

- Վճարմունք կանխիկ:
1. Նշանակը Հայաստանեայց
 2. Նրբաշէն Հայրիկ
 3. Իգմորիական Պատգամ
 4. Ներսէս Պատրիարք
 5. Բաթֆի
 6. Բամառ Բաթիլայ
 7. Գ. Արծրունի
- Դիմել՝ K. Deukmedjian Roustchouk (Bulgarie)

ՆՈՒՍԿԱՆԵՐ
Ա. ԱՄՍԱՆԻ
Գինն է 10 կոպէկ: Եւրոպայի համար — 25 — սանթիմ. գումարով գնողներին 10 օր զեղջ կը լինի:
ՊԱՏՄԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Ա. ԱՄՍԱՆԻ
I «ՀԱՅԴԻՈՒԿ» պօստան
II «ՎԱՀԻ» ժամանակակից վէպը

Երկուսի նիւթն էլ առնուած է Վասպուրականի վերջին դէպքերից և իւր սքանչելի բաղկացած է 32 երեսներէ:

Դրանց տպագրութեան ծախքը հոգալ կամեցողները թող բարեհաճին իրենց պայմանները գրել հեղինակին հետեւեալ հասցէին:

A ASMAN. Tauris — Perse
Poste Restante

«Միութիւն» ստացող մեր պատ. ազգայիններէն կը խնդրենք որ հաճին իրենց բաժնեգինները զրկել և կամ թերթը վերադարձնել որ հասկընաք իրենց բաժանորդութիւնը դադարած ըլլալը:

ԽՄԲԱԿ. «ՄԻՈՒԹԻՒՆ»
ԱՌԵՆԵՐ ՀԱՅԿ. ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ